ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2024 թվականի N 0960-Ա

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՀՈՎԱԿԻՄԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԴՍՏԵՐ՝ ՍՈՆԱ ՍԱՐԳՍԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԳՐԱՎԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով և հիմք ընդունելով Սյուզաննա Հովակիմի Կիրակոսյանի 2024 թվականի հուլիսի 23-ի թիվ 4209 դիմումն իր անչափահաս դստեր՝ Սոնա Սարգսի Վարդանյանին /ծնված՝ 04.09.2006 թվականին/ համասեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի, Արմավիր քաղաքի, 5-րդ փողոցի 1 շենքի 82 բնակարանում գտնվող բնակելի տունը գրավադրելու մասին, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի հուլիսի 23-ի թիվ 07 նիստի արձանագրությամբ տրված դրական եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Թույլատրել Սյուզաննա Հովակիմի Կիրակոսյանին /ծնված՝ 13.10.1985 թվականին/ գրավադրել իր անչափահաս դստեր՝ Սոնա Սարգսի Վարդանյանին /ծնված՝ 04.09.2006 թվականին/ համասեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի, 5-րդ փողոցի 1 շենքի 82 բնակարան հասցեում գտնվող բնակելի տունը:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐՇԱՄ ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. հուլիսի 23
ք. Արմավիր